

Վ. ԴԱՎԹԵՅԱՆԻ ԽՈՍՔԱՐՎԵՍՏԻ ԺՈՂՈՎՐԻՒԱՑՆՈՒԹՅԱՆ  
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Լ. Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Վ. Դավթյանի չափածոյի բառապաշարը բավական հարուստ է և ներառնում է համաժողովրդական լեզվի գրեթե բոլոր շերտերը՝ համագործածական, գրաբարյան, ժողովրդախոսակցական, շնչին քանակությամբ՝ բարբառային, ինչպես նաև չբավարարվելով եղած բառամթերքով, բանաստեղծը կերտում ու հաջողությամբ օգտագործում է նոր բառեր կամ եղածներին հաղորդում իմաստային նոր նրբերանգներ:

Ակնբախ է, որ Վ. Դավթյանը ձևի մեծ վարպետ է և նախընտրում է մաքուր գրական ոճը: Նրա չափածոյի բառապաշարի միջուկը գրական լեզվի բառաշերտն է, որն անցնելով բանաստեղծի ստեղծագործական քուրաջով, ձեռք է բերում հնչեղութուն ու գեղեցկութուն: Ունենալով խիստ ընդգծված «գրական հանդերձանք»՝ Դավթյանի չափածոյի լեզուն, բառապաշարը նաև ժողովրդային են, ազգային ցայտուն երանգներ, հայկական լեզվամտածողության դրոշմ ունեն, ընդ որում հարկ է նկատել, որ ժողովրդայնության որակը ձեռք է բերվում ոչ թե ժողովրդախոսակցական ու բարբառային բառերի առատ գործածությամբ, այլ խոսքի ընդհանուր հյուսվածքով, այսպես ասած՝ ներքին ժողովրդայնությամբ: Եվ իրավացի է Ռ. Իշխանյանը, երբ անդրադառնալով Հ. Թումանյանի լեզվի ժողովրդայնությանը, գրում է. «Շատ դեպքերում անգամ գունեղ, բուրումնավետ ժողովրդային արտահայտությունները կորցնում են իրենց գրավչությունը հեղինակի ընդհանուր խոսքի անգույն միջավայրում: Հաջողության գաղտնիքը ամենից առաջ տաղանդի զորության մեջ է, որի շնորհիվ իսկական ներշնչանքի ուժով, արվեստագետի նրբազգացությամբ է գոյանում խոսքի հյուսվածքը, երբ այդ լեզվի մեջ հանճարի ոգին է մտնում»<sup>1</sup>:

Ուրեմն միայն ժողովրդական ինչ-որ բառեր, թեկուզև չափազանց արտահայտիչ ու գեղեցիկ, խցկելով խոսքի մեջ, դեռևս չի ստեղծվի ժողովրդայնության որակ, կարևորը համակարգն է, այսինքն՝ ողջ խոսքի հյուսվածքը:

Ընդունված է ժողովրդային համարել հատկապես այն գրողներին, որոնց լեզուն ակնհայտ ժողովրդախոսակցական հենք ունի և լի է համապատասխան բառաշերտի միավորներով: Այդպիսի ժողովրդայնության դասական օրինակ է մեծն Թումանյանի լեզուն: Կան գրողներ էլ, որոնց խոսքարվեստն առաջին հայացքից աչքի չի ընկնում ակնբախ ժողովրդայնությամբ, քանի որ նրանց լեզվում ժողովրդախոսակցական ու բարբառային բառերի ու ձևերի գործածությունը այնքան էլ հաճախված չէ: Նման հեղինակների խոսքարվեստի ժողովրդայնությունը ամենից առաջ դրսևորվում է ասելիքի էություն, խոհերի ու զգացումների արտահայտության մեջ: Այդպիսին է մեզ ներկայա-

<sup>1</sup> Ռ. Իշխանյան, Արևիկա՞յն քանաստեղծության լեզվի պատմություն, Եր., 1978, էջ 247:

նում Վ. Դավթյանի խոսքարվեստը: Իհարկե, բանաստեղծի ստեղծագործության մեջ կարելի է գտնել շափածոյի նմուշներ, որոնց էությունն ու ոգին բմբռնելու համար պահանջվում է մտավոր որոշակի մակարդակ ու հասունություն, մտքի ու հոգու «վերին» ոլորտների իմացություն, գեղագիտական բարձր ճաշակ, նրբին լեզվազգացողություն: Ահա, օրինակ, բանաստեղծական մի այդպիսի պատասոհկ.

**Ամենաքնքուշ քառերդ պահիր,  
Որ ժայռիմ քուսած մեճավոր ծառի  
Քախիծն օրորես:  
Ամենամաքուր քնքշանքդ պահիր,  
Որ նրա բարակ, տխուր մատներով  
Մեճավոր կնոջ ուտերը շոյես<sup>2</sup>:**

«Վերին» ոլորտի նման շատ էջեր կարելի է գտնել Վ. Դավթյանի քնարերգության մեջ, սակայն հեղինակի տաղանդի ամենակարևոր առանձնահատկությունն էլ հենց այն է, որ դրանց կողքին նրան հաջողվում է հյուսել պոեզիայի ազգային-ժողովրդական հենքով նմուշներ, որոնք մնալով մտավոր բարձրաճաշակ շափածոյի մակարդակին և շիջնելով գետնամած գեղջկականի աստիճանին, մեր կարծիքով մի տեսակ ներկայացնում են այդ երկուսի միահյուսվածքը: Ահա թե ինչպես է այդ համաձուլվածքը մեկնաբանում ինքը՝ հեղինակը՝ իր երգին հղելով հետևյալ խորհուրդը.

**Դու կայծակի պես  
Վերևում ծճվիր,  
Եղիր երկնային  
Ճախր ու սլացում,  
Բայց և ճախճական  
Այն կայծակի պես  
Իջիր և օջախ  
Դարձիր դու ցածում<sup>3</sup>:**

Վերոբերյալից հետևում է, որ ասելիքի ոգին, ներքին տարերքը պիտի ժողովրդական լինի: Այսպես, «Թոնդրակեցիներ» պոեմում մի ուշագրավ պատկեր կա. շաղում է ոսոխի մտրակը, ամենուր դաժանություն է ու արյուն, հայ շինականները լի են վրեժխնդրությամբ, նրանց մեջ է և մի գուսան, որին անգթորեն գանահարել են ու տանջել, «խորշումած դեմքին հետքն է մտրակի», և ահա թվում է, թե գուսանը պիտի ցավ ու կսկիծ երգի, փառաբանի «ակն ընդ ական»-ը, մինչդեռ շառաշում է մի բոլորովին այլ տաղ՝ գովք արծվին, որը պիտի երկինք վերանա ու մերձենա արևին, «լվացվի նրա հրով», ապա իջնի լեռան աղբյուրի մոտ, «նորեն մանկանա» ու սլանա ամպերի վրայով, շառաշի դարձյալ: Ընդգծված ռոմանտիզմ ու հուսո շեշտեր կան այս երգում, և ակամա մտաբերում ես հանճարեղ լոռեցու «Լուսավորչի կանթեղը». հայի ոգուն բնորոշ են լույսի, վեհի, կատարյալի ձգտումը, որ սկիզբ է առնում մեծն Նարեկացուց, ծավալվում Թումանյանի ստեղծագործության մեջ, ռոմանտիզմը, ամենաճակատագրական ու օրհասական պահերին հույսի նշույլ որոնելը, և ահա դավթյանական գուսանի երգը ևս ասվածի ապացույցն է, ուրեմն հարկավոր չէ անպայման այդ երգում փնտրել ու գտնել ժողովրդախոսակցական բառեր ու ձևեր, էականը ազգային ոգին է, ներքին տարերքը:

Այդ էական հատկանիշները դրսևորվում են նաև խոսքի արտահայտչամիջոցների ընտրության ու կիրառության մեջ: Այստեղ էլ նկատելի են ժողո-

<sup>2</sup> Վ. Դավթյան, Անքնություն, Եր., 1987, էջ 187:

<sup>3</sup> Վ. Դավթյան, Երկեր երկու հատորով, հ. 1, Եր., 1985, էջ 356:

վրդական լեզվամտածողութեան ինչ-ինչ երանգներ: Այսպես, օրինակ, դավթ-  
յանական շատ համեմատութիւններ համեմված են ժողովրդի կենցաղից, ծե-  
սերից ընտրված, հասարակ մարդուն մատչելի ու սրտամոտ առարկաների  
ու երևութիւնների անվանումներով:

**Սերն ու բարին այս աշխարհում  
Քեղեցիկ են, որպէս ցորեն: («Աճքճ»—27)**

Սերն ու բարին կոնկրետ բնորոշելու համար հեղինակը որպէս համեմա-  
տութեան եզր չի փնտրում բարդ ու վերացական երևութիւններ, այլ նախընտ-  
րում է պարզը, ժողովրդականը, մատչելին, հասկանալին, կենսականը՝ ցո-  
րենը՝ որպէս ժողովրդական սրբութիւն:

Վ. Դավթյանի խոսքարվեստի ժողովրդայնութեան մի փոքրիկ մասնիկն  
են բառախաղերը, որոնք շատ սակավ կիրառութիւն ունենալով հեղինակի  
լեզվում, այսուհանդերձ դիպուկ գործածված որոշ դեպքերում անհրաժեշտ  
կոլորիտ, ժողովրդական համ ու հոտ են հաղորդում խոսքին: Որքան բնորոշ ու  
տիպական է, օրինակ, «Միրանի ծառ» պոեմում ծաղրածուի խոսքում գոր-  
ծածված բառախաղը:

**Ձեռն ու ձուռն չկա... Առել են կուտը,  
Մտել են մութը: (2—180)**

Իսկական ժողովրդականութեան ամենաէական հատկանիշը պարզ մտա-  
ծողութիւնն է, որը ծնում է լեզվամտածողութեան ու խոսքի պարզութիւնը:  
Այնտեղ, որտեղ մտածողութիւնը բարդ է ու խճողված, պիտի փնտրել ասե-  
լիքի պակաս և որպէս հետևանք՝ լեզվամտածողութեան ու արտահայտութեան  
անկատարութիւն: Ժողովուրդը միշտ էլ ամենաբարդն ու դժվարը մբռնելին  
արտահայտում է պարզ ու հստակ ձևի մեջ, ուստի տվյալ հեղինակի լեզվի  
ժողովրդայնութեան առաջնահերթ հատկանիշը պիտի ընդունել խոսքի պար-  
զութիւնը: Վ. Դավթյանի խոսքը շահեկանորեն աչքի է ընկնում հենց այս  
հատկանիշով: Սովորաբար բանաստեղծը հակված է դեպի պարզ ու հստակ  
խոսքը, նրա լեզուն հեռու է ավելորդ ու շինծու խճողումներից, կեղծ շեշտե-  
րից ու երանգներից: Ահա մի բնորոշ օրինակ:

**Աղքատ եմ նորից...  
Կոպերս փակեմ,  
Գնամ,  
Մանկութեան մաքուր գեռակից  
Արծաթ հավաքեմ: (1—267)**

Բանաստեղծական այս փոքրիկ պատարկիւմ կա ոգի, ասելիք և պար-  
զութիւն, չկա բարդութեան ու խճողման նշույլ անգամ: Մեկ ուրիշը այս ու-  
շագրավ խոհը գուցե ծավալեր, բառերի ու պատկերների տարափ տեղար,  
մինչդեռ դավթյանական լեզվամտածողութեանն ու պատկերային համակար-  
գին խորթ է նման արհեստական բարդացումը, մանրանալը: Պարզութիւնն է  
խոսքի գեղեցկութեան չափանիշներից մեկը:

Հիրավի ճշմարիտ ժողովրդայնութեամբ է աչքի ընկնում Վ. Դավթյանի  
խոսքարվեստը: Կարոտը, վիշտը, ուրախութիւնը, թախիծը, սերը, հայրենա-  
սիրութիւնը, երազանքը, տառապանքը համամարդկային զգացումներ են, սա-  
կայն ամեն մի ժողովուրդ ունի միայն իրեն բնորոշ կարոտը, վիշտը, տառա-  
պանքը, և ահա կարևորն այն է, թե գրողին որքանով է հաջողվում դառնալ  
այդ ազգային հանդերձանքով զգացումների թարգմանը: Այսպես, հայկական  
չէ՞, օրինակ, դավթյանական կարոտը:

Առաջին անգամ աշխարհում տեսած  
Իմ առավոտն է այնտեղ մնացել,  
Նա, որ բուրում էր իբրև ցորեն հաց  
Եվ բուրում իբրև գարնան հող ու ցեղ... (1—16)

«Մենդավայր» բանաստեղծության այս և հետագա քառատողերում չկա ոչ մի ժողովրդախոսակցական կամ բարբառային բառ, տարր, մասնիկ, ավի-  
լին՝ գերակշռում են գրական ոճի գեղեցիկ ու հնչելի բառերը՝ բուրել, ջինջ,  
անապական, լուսեղեն, իսկ խոսքի հյուսվածքը ազգային է, ժողովրդական,  
սրտամոտ ու հարազատ: Հայի ճակատագրին բնորոշ պատկեր է սա, ապրված  
զգացումների խտացում, ուստի մտերմիկ է ու ջերմ՝ հանդերձված ժողովրդ-  
դականությամբ: Արդի գրական հայերենի բառամթերքով հյուսված ժողովրդ-  
դական երանգ ունեցող նման շատ օրինակներ կարելի է գտնել Վ. Դավթյանի  
քնարերգության մեջ, սակայն, իհարկե, գրողը երբեմն խոսքին ժողովրդայ-  
նություն հաղորդելիս դիմում է նաև ժողովրդախոսակցական բառերի շափա-  
վոր գործածությանը: Ծթե գրողը ճշմարիտ հայրենասեր է ու ժողովրդասեր,  
անհնար է, որ շօտագործի ժողովրդախոսակցական բառեր, արտահայտու-  
թյուններ, սակայն այստեղ էլ անհրաժեշտ է տաղանդ, նուրբ լեզվազգացող-  
ություն, շափի զգացում, որովհետև ժողովրդային լեզվի որևէ միավորի օգ-  
տագործում պիտի հեղինակային ընդգծված դրոշմ ունենա, այսինքն՝ ժողո-  
վրդախոսակցական լեզվի այդ միավորը պիտի ձուլվի ընդհանուր խոսքի  
հենքին, շրնդգծվի, «խոսքային կարկատանի» տպավորություն չթողնի, մերվի  
պատկերին՝ կատարելով հանդերձ իր ոճական դերը: «Ձայներ» բանաստեղ-  
ծության մեջ իշխում է գրական լեզվի բառամթերքը՝ ցոլանք, փարանձավ,  
ավերակված, վաղեմի, դողանջ, լուսնկա, խնկահոտ, տվայտել, լի են գրա-  
կան ոճին բնորոշ բազմաբարդ նախադասությունները, և այստեղ առկա են  
ժողովրդախոսակցական բառաշերտի ընդամենը 2 միավորներ՝ ճամփեք և զիլ,  
որոնք, բնականաբար, ժողովրդական երանգ են հաղորդում ողջ բանաստեղ-  
ծությանը:

«Ներեցեք, տղերք» բանաստեղծությունը նվիրված է պոետի մանկության  
երկու ընկերների հիշատակին: Կրկին բանաստեղծության բառամթերքը արդի  
գրական հայերենի բառերն են, և միայն տղեք մի հատիկ բառը մանկության  
օրերի պատրանք է ստեղծում, խոսքին անմիջականություն ու ջերմություն  
տալիս:

Ծնելով ասելիքի ընձեռած հնարավորություններից՝ բանաստեղծը երբեմն  
դիմում է ժողովրդախոսակցական բառերի առավել առատ գործածության:  
«Թոնդրակեցիներ» պոեմի մի հատվածում ներկայացված է հայ գերիների  
խոսքը, և բնականաբար գերյալ մոր ու որդու զրույցը երանգավորված է բա-  
զում ժողովրդական բառերով ու տարրերով:

— Ծարավ եմ, մերիկ, ջուր, ա՛խ, պուտ մի ջուր...

— Համբերի՛ր, հոգեկ, համբերի՛ր, հաւանք...

— Ո՛ր ես մեր սարի զմփզմփան ակապուր,

Ախպուր չէր, լսո՛, զանգ ստա դու, զանգ... (2—92)

Առհասարակ «Թոնդրակեցիներ» պոեմում, ելնելով նյութի ընձեռած հնա-  
րավորություններից, հեղինակը շոայլ օտագործում է ժողովրդախոսակցա-  
կան բառեր ու ձևեր (էս, էդ, էն, էնպես, ձենձենոց, ջոջ, ծուտ, հեշ, պագնել,  
խորոտ, ինոռ, զմփզմփան, լան, ծանդրիկ):

Լեզվական կերպավորման նպատակով ժողովրդախոսակցական ձևերի ա-  
ռատ կիրառություն ենք գտնում «Երգի ծնունդը» պոեմի հերոսներից մեկի՝  
սասունցի Մանուկ ափոյի խոսքում (ղրկել, բիջ, պուտ, սրտիկ, ֆելք, ճամփա,

ծամկտրած, հերիկ, մերիկ, նծեր, բոռ, էնտեղ, ախպեր, լան, արուն, գեշ, անուշիկ, երթալ և այլն):

Վ. Դավթյանը խոսքի ժողովրդայնության է հասնում ոչ միայն ժողովրդախոսակցական բառերի կիրառությամբ, այլև դիմելով լեզվական այլ միջոցների: Լեզվի ժողովրդայնության ցայտուն հատկանիշներից է խոսքի սեղմությունը, խնայողությունը, շնորհ, որից զուրկ չէ Վ. Դավթյանի խոսքարվեստը: Բանաստեղծի շատ երկեր աչքի են բնկնում ասելիքի համառոտությամբ, սակայն առանձնապես այդ հատկանիշները բնորոշ են «Ծրգի ծվեններ» շարքին: Վերնագիրն ինքնին ենթադրում է խնայողական խոսք, և շարքի փոքրիկ, բայց իմաստով խորունկ ու տարողունակ ծվենները դրա լավագույն ապացույցներն են: Ահա, օրինակ, գյուղի սոսկոտին նվիրված խոսքի մի պատահիկ.

**Գյուղի սոսկոտ...**

**Կապույտ ու բարդի:**

**Թոնիրների մեջ հացն է արթնանում,**

**Խնչ-որ տեղ գառն է մայունով լալիս...**

**Ու խղճի հոտ է**

**Աշխարհից գալիս: (1—269)**

Գյուղաշխարհի ընդամենը 2—3 վրձնահարված, և խորունկ եզրակացություն՝ ժողովրդական պարզ լեզվամտածողության ձևերի մեջ, մատչելի՝ ամենքին:

Ահա ժողովրդի կենցաղին ու կենսափիլիսոփայությանը հարազատ մեկ այլ ծվեն-խորհրդածություն.

**Միծեռնակները վերադարձել են,**

**Մախրում, ճշում են**

**Խենթ հարրածները...**

**Եվ միայն ճամփի հողմերը գիտեն,**

**Որ նրանք այն մույն**

**Տառապածներն են: (1—271)**

Սեղմ, պարզ ու մատչելի ձևի մեջ արտահայտված է իմաստասիրական ուշադրավ միտք, որը մեկ այլ դեպքում ներկայացվում է աղբյուրի պատկերով.

**Աղբյուրը...**

**Լեռան աղբյուրը մաքուր**

**Ուշաքափվում է ասես ծիծաղից:**

**Բաց երկար մալիր,**

**Ընդերքից ելած տառապանք է լույս**

**Ու տառապանքով մաքրված թափծ... (1—271)**

Խոսքին ժողովրդայնություն ու սեղմություն է հաղորդում դարձվածների, աֆորիզմների, թևավոր խոսքերի գործածությունը: Վերջերս լույս տեսած Խ. Բաղիկյանի «Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները» մենագրության մեջ արդի լեզվաբանության նվաճումների տեսանկյունից ներկայացված են դարձվածի հատկանիշները. անմիատարրությունը, խոսքաշարային միջավայրը, բազմիմաստությունը, պատրաստի կառույց լինելը, բաղադրիչների անտարրալուծելիությունը<sup>4</sup>: Պիտի նշել, որ Վ. Դավթյանը առավել հաճախ գործածում է դարձվածային նախադասություններ. այն էլ՝ յուրօրի-

<sup>4</sup> Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Եր., 1986, շջ 43—47:

նակ մշակմամբ: Այսպես, համաբանությամբ հեղինակը փաստորեն ստեղծել է մի նոր դարձվածային նախադասութիւն.

**Օձ ընկնի ձեռքը՝ կուզենա խուզել,  
Աչքդ դուրս եկա՛վ՝ կառի ինձ տվե՛ք,  
Տաճե՛մ իմ կատվից... (2—191)**

Ուշագրավ դարձված է՝ գործածված ծաղրածուի խոսքում («Միրանի ծառ»): Նախ դարձվածով արտահայտվելը բնութագրական է ծաղրածուին և հետո՛ դիպուկ է ու ուշագրավ: Նրա խոսքում մեկ այլ հետաքրքիր դարձված ևս կա՝ կրկին որոշ թարմ երանգով.

**Կատվի մտութք մտից չհասա՛վ,  
Միտք արեց, ասաց, այսօր ուրբա՞ք է... (2—240)**

Խոհուն բանաստեղծը լայնորեն գործածում է թևավոր խոսքեր ու աֆորիզմներ՝ կրկին մեծ մասամբ թարմ երանգներով: Երբ Մանազկերտի շուկա է մտնում արաբ գերեվաճառ Ալ-Իբն-Մանսուրի ստվար բազմութիւնը, ահա թե ինչպիսի ժողովրդական իմաստուն խոսքով է ընդհանրացվում հայի պատմական ճակատագիրը («Թոնդրակեցիներ»):

**— Վա՛խ, հայոց աշխարհ, ողբամ ես ըզքեզ,  
Պակասո՞՛ հազար, գերիդ կա ու կա: (2—94)**

Կամ որքան խորիմաստ է հետևյալ թևավոր արտահայտութիւնը՝ վերըստին շատ բնորոշ մեր ժողովրդի ճակատագրին: «Բայց ծնվեցի» պոեմում, խոսելով իր հայրենի ծննդավայրի մասին, ուր բազմիցս խուժել ու ավերածութիւններ են կատարել ոսոխները, հեղինակը գրում է.

**Այնտեղ բարից՝ լեռան հետև,  
Ու չարն էլ միշտ դռան հետև: (2—524)**

Շարունակելով իր մեծ նախորդների ավանդները՝ Վ. Դավթյանը ստեղծում, վերածնունդ ու հաջողությամբ օգտագործում է աֆորիզմներ: Ահա մի օրինակ.

**Քանզի շուրթերն այն, որ կնոջ շուրթից չեն այրվում կրակքում,  
Չեն կարող նաև մարգարեական խոսքերով այրվել: (1—288)**

Ժողովրդական լեզվամտածողութիւնը բնորոշ է հարադրութիւնների լայն կիրառութիւնը: Վ. Դավթյանի քնարերգութիւնի մեջ հատկապես հաճախված է բայական հարադրութիւնների գործածութիւնը: Պիտի նկատի ունենալ, որ բայական հարադրութիւնն իմաստային ավելի հարուստ նրբերանգներ ունի, քան նրա պարզ համանիշը, ինչպես՝ ներս ընկնել—մտնել, միտք անել—մտածել, ականջ դնել—լսել: «Մշո լեռներում» բանաստեղծութիւնն աչքի է ընկնում գրական ոճի բառերի առատությամբ՝ վճիտ, ստիճե՛, աստղալույս, դաշնութիւն, լոզանե՛, լուսնկա, առույգ, շխանալ, և այստեղ ականջ դնել հարադրութիւնը ժողովրդային երանգ է հաղորդում խոսքին: Նկատենք նաև, որ ականջ դնել հարադրութիւնը եթե փոխարինենք ունկնդրել, լսել և այլ պարզ համանիշներով, իմաստի որոշ խաթարում կլինի. խորհրդավոր ու խորհրդանշական պատկերին առավել համահունչ է հարադրութիւնը, որ նույնպես նման ինչ-ինչ երանգներ ունի:

«Մի գիշերով արթնանայիր» բանաստեղծութիւնի մեջ հեղինակը ձգտում է վերականգնել անցած-գնացած օրերի պատկերը, ուստի հետևում է ժողովրդական լեզվամտածողութիւնը բնորոշ տարրերի, այդ թվում՝ հարադրութիւնների գործածութիւնը.

**Տառս չորքեր ու աստծո հետ  
Ամեր գրուցն իր սուրբ: (1—83)**

Վ. Դավթյանի քնարերգության մեջ հանդիպում ենք նաև հարադրություն մի տարատեսակի՝ զուգադրական բայերի հմուտ կիրառությունը: «Ամպել էին, մթնել էին» բանաստեղծությունը ներկայացնում է զաղթի նախապատրաստությունը, և այստեղ զուգադրական բայերի գործածությունը ցայտուն է դարձնում պանդխտության պատրաստվելու երկար ու ձիգ ընթացքի պատկերը՝ յուրահատուկ դինամիզմ հաղորդելով խոսքին:

**Ամպել էին, մթնել էին դեմի լեռները...  
... Դարսում էին, կապում էին  
Մեր ճամփի հացը: (1—24—25)**

Զուգադրական բայերի կիրառությունը ստեղծում է դանդաղ ու համաչափ ուժով՝ ներդաշնակ պատկերին:

Խոսքին ժողովրդայնություն հաղորդելու նպատակով Վ. Դավթյանը դիմում է նաև խոսակցական լեզվին բնորոշ որոշ ածանցների, մասնիկների գործածությանը, ինչպիսին է, օրինակ, իկ, լիկ փաղաքշական ածանցը:

**Եվ մանկության պես աստղը շնկիկ էր,  
Ծողում էր ու տաք: (1—47)**

Ինչպես հատուկ է պոետի ոճին, «Մանկության գիշեր» կոչվող այս բանաստեղծությունը ևս գրված է գրական լեզվի բառամթերքով, և շնկիկ ժողովրդախոսակցական ընդգծված հրանգով բառը, անտարակույս, կատարում է իր դերը՝ ժողովրդական լիցք ու մանկության բույր հաղորդելով խոսքին: Ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Պապոյանը, «խոսքին կարող է երբեմն ժողովրդայնության երանգ հաղորդել առտնին խոսակցական լեզվից քաղված բառերի, մասնիկների, ձևությաների ու ձևերի դիպուկ ու հմուտ կիրառությունը»<sup>5</sup>:

Նույնպիսի երանգ ունեն նաև ուկ ածանցով բառերը: «Թոնդրակեցիներ» պոեմում հեղինակը գուսանի խոսքում գործածում է պաղուկ ընդգծված ժողովրդական երանգով բառը:  
Կամ՝

**«Ա՛խ, ես պաղուկ ջուր լինեի»: (2—188)  
Իր ձագուկն ունի ամեն արարած: («Աճքն»—254)**

Խոսքի ժողովրդայնության բնորոշ նրբագիծ է կրկնավոր բարդությունների կիրառությունը: Այստեղ էլ բանաստեղծը նման բարդությունների տեղին ու գուսպ գործածությամբ հասնում է խոսքի բնականության ու ժողովրդայնության:

**Ամպել էին, մթնել էին  
Դեմի լեռները,  
Պարսն-պարսն կապում էին  
Ա՛խ, մեր քեռները:  
Կապում էին ամսն-չամսն  
Ու ճիճ կարպետը: (1—24)**

Խոսքի ժողովրդայնության այս տարրին է դիմում հեղինակը ժողովրդական հերոսների լեզվական կերպավորման նպատակով: «Թոնդրակեցիներ» պոեմում գուսանին բնութագրելիս, ինչպես նաև նրա խոսքում հեղինակը առատորեն օգտագործում է կրկնավոր բարդություններ: «պատառ-պատառ են

<sup>5</sup> Ա. Պապոյան, Պ. Սևակի չափածոյի լեզվական արվեստը, Եր., 1970, էջ 28:

շորերը հագի», «խմբերով ու մեկ-մեկ գալիս են» շինականները, շառաչում է գուսանի տաղը, որ գովերգում է արծվին.

Ու մեկիկ-մեկիկ թոթափիմ,  
Աղջուրի ջրի մեջ թափիմ  
Փետուրքն հնացալ: (2—117)

Հեղինակը հաջողությամբ գործածում է նաև բայարմատի կրկնություններ, որոնք նույնպես խոսակցական երանգ ունեն (գոռգոռալ, հալհլիլ, ձեն-ձենիլ և այլն): Օրինակ, «Թոնդրակեցիներ» պոեմի մի հատվածում բանաստեղծը ներկայացնում է, թե ինչպես թոնդրակեցիները քարեր են գլորում թըշնամու գլխին, ինքնամոռաց մաքառում, և այստեղ շատ տեղին ու դիպուկ է գործածված ձենձենեցիլ բայը, որը կազմված է ձեն խոսակցական ձևի կրկնությունով և սաստկացնում ու պատկերավոր է դարձնում պայքարողների աղմուկ-աղաղակը, ընկնող քարերի որոտը.

«Ժպտերն ի վար իջամ խոյոք,  
Գոռգոռացիմ, ձենձենեցիմ: (2—186)

Իհարկե, գրական ու խոսակցական համասնիչներից Վ. Դավթյանը հիմնականում նախապատվությունը տալիս է առաջինին, սակայն երբեմն, ելնելով նյութի ընձեռած հնարավորություններից, առաջին պլան են մղվում խոսակցական ձևերը: Այսպես, երբ ներկայացվում է գյուղական մթնոլորտ, կարելի է և գործածել ամենասիրուն-ը.

Դաշտից մեր գյուղի ամենասիրուն  
Աղջիկն էր գալիս,  
Ու կակաչի պես շքոք էր թրթռում... (1—47)

Ահա և մեկ այլ օրինակ. մազ-հեք-վարս-ծամ հոմածշային շարքից հիմնականում նախապատվությունը տալով առավել գրական ձևերին (վարս, հեք), այսուհանդերձ որոշ դեպքերում, վերստին նյութի ոգուն համապատասխան, բանաստեղծը նախընտրում է ծամ-ը, որը, մեր կարծիքով, ավելի ժողովրդական երանգ ունի: «Երևան, ինձ ներիք» բանաստեղծության մեջ հեղինակը, թողած նորօրյա քաղաքի «սրբատաշ հրաշքները», երանություններում ու հիշում է Մահարու և Չարենցի երգած հին մայթերն ու «նաիրյան փոշին», և այստեղ թառի գիշերային հեկեկանքի ներքո բանաստեղծը կարոտել է և «ծամավոր աղջկան».

«Մահու չափ կարոտնմ ծամավոր աղջկան»: (1—144)

Մամավոր ժողովրդախոսակցական երանգով բառը ներդաշնակում է հին Երևանի պատկերներին, ուրեմն և արդարացվում է հեղինակի ընտրությունը: Վ. Դավթյանն ընտրում ու հաճույքով օգտագործում է այնպիսի բարդ ու ածանցավոր բառեր, որոնք կազմված են ժողովրդախոսակցական արմատներից: Այդպիսին են, օրինակ, ծոց աներկբայելիորեն խոսակցական երանգ ունեցող արմատից կազմված լիածոց ու ծոցվոր բառերը, որոնք բնականաբար համապատասխան շունչ են հաղորդում խոսքին.

«Հայտնիներ՝ աչքերը բոց,  
Մայրագորով ու լիածոց»: (2—822)

Մոցվոր ածականով հեղինակը հիմնականում բնութագրում է ծառերը, դաշտերը, բերքն ու բարիքը, և պիտի նշել, որ այդ որոշիչը դիպուկ ու պատկերավոր է բնորոշում առատությունը:

Երբեմն հեղինակը անգամ նույն բանաստեղծության մեջ գործածում է



և՛ գրական, և՛ խոսակցական ձևերը, ինչպես, օրինակ, ծնկել-շոֆել («Քեկուզ գիտեմ...»):

Խոսքին ժողովրդայնություն է հաղորդում ձայնարկությունների առատ գործածությունը: «Թոնդրակեցիներ» պոեմի այն հատվածներում, ուր ներկայացվում են շինականները, Մանազկերտի շուկան, շոալլորեն գործածված են զգացական, նմանաձայնական ու կոչական ձայնարկություններ (հե՛յ, հա՛-հա՛-հա՛, հի՛-հի՛, ա՛խ, շէ՛, է՛, ա՛յ, վա՛յ, դե՛, է՛հ և այլն), որոնք առավել ամբողջական են դարձնում խայտաբղետ ամբոխի, շուկայի պատկերը:

Ժողովրդական լեզվամտածողությանը հատուկ է և մաղթանքների, ողջույնների ու անեծքների օգտագործումը: Լսում ես «Թոնդրակեցիներ» պոեմից սերմնացանի երգը, և քո առջև ցոլանում է հայ հասարակ մարդու հոգևոր կերպարը, գծագրվում են նրան բնորոշ հատկանիշները: Անգամ այս ծանր պահին, երբ իր իսկ՝ հեղինակի խոսքերով ասած՝ «չարը դուան հետևն է», սերմնացանը կրկին մեծահոգի է ու առատաձեռն և օրհնանքով ու մաղթանքով բերքն ու բարիքը հղում է պապերի աճյունին, մյուս բուռը՝ աղքատներին, գերյալներին ու տնանկնհրին, մի երրորդ բուռն էլ՝ «ըլուն-թուլուն ճնճուզ» հավքին: Այս ամբողջ խոսքը համեմվում է օրհնանքով ու մաղթանքով:

— Փա՛ռք քեզ, աստված, տուր աջողում,  
Թող մեկն հազար դառնա հողում: (2—120)

Բանաստեղծը երբեմն գործածում է բառերի կարճ ձևերը, հանգամանք, որը ևս բնորոշ է ժողովրդական լեզվամտածողությանը: Վ. Դավթյանի պոեզիայում հանդիպում ենք բազմաթիվ այդպիսի կարճված ձևերի (արնել, զարհուր, համբեր, կամել, դրոշակիր, անօգ, ծվատ և այլն):

Այսպիսով, Վ. Դավթյանի խոսքարվեստն էությունաբար, ներքին տարբերով ժողովրդական է: Բազմաթիվ ու բազմապիսի բաղադրիչներից է գոյանում լեզվական այդ որակը, որին իրենց նպաստն են բերում թվարկված բազում միջոցները՝ կազմելով մի կուռ ամբողջություն:

Յ. Գ. АИРАМЕТЯН—Несколько вопросов народности поэтики Ваагна Давтяна.—  
Статья посвящена исследованию народно-разговорного пласта в поэтической речи В. Давтяна. Подробно характеризуются элементы народного слова в давтяновской лексике, средства их стилистического использования. Однако привлечение стихии народной речи для поэта не самоцель и обусловлено своеобразием его языкового мышления.